

2945

Մ. ՏՈՄՍԿԻՅ



**ԻՆՁ ՏՎԵՑ
ՀՈԿՏԵՄԲԵՐԸ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ**

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ,
ՄՈՍԿՎԱ, 1928

9(47)

Ա - 83

2975

24 JAN 2006

9147)
4-83

Մ. ՏՈՄՍԿԻՅ

30 MAY 2011

ԻՆՉ ՏՎԵՑ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Քարգմ. Բ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

1003
14378

37
~~3507~~
1280

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԼՐՈՍԿՎԱ, 1928

23 JUL 1953

Տպագրվում է Համ. Արհմ իռք յունևերի Վեկերո-
նակաև Խորհրդի պատվերով



Главлит № 98311 Зак. № 378. Тираж 3000 экз.
Книжн. ф-ка Центральн. Изд-ва Народов СССР. Москва, Шлязовая наб., 6.

Մի քանի որ հետո*, Խ. Ս. Հ. Մ. բանվոր դասակարգը
տոնելու յե տասնամյակն այն նշանակալից որվա,
յերբ նա, առաջին անգամ մարդկության պատմության
մեջ, առաջին անգամ աշխարհում, հանձինս Լենին-
գրադի բանվորների, դեն ձգեց կալվածատերերի և
կապիտալիստների իշխանութունը և յերկրի կառու-
վարության գործն իր ձեռքն առավ: Այսօր, այս ժողո-
վում մեր նպատակն և ամփոփել ներկա տասնամյակի
արդյունքները: Ճիշտ և, այս հանդիսավոր նիստի պայ-
մանները մեզ հիշեցնում են 1917—18-րդ արժանահիշա-
տակ թվականները, վորովհետև այժմ ել ելեքտրակա-
նութունը հրաժարվում և վառվել, ինչպես նա հրա-
ժարվում եր վառվել այն ժամանակ: Բայց այսօր
աշխատում և հեռախօսը, վորն անցյալում աշխատում
եր յերեք սիստեմով՝ 1) «Ինձ զանգահարել կարելի յե,
իսկ իմ մտից վոչ». 2) «Իմ մտից կարելի յե, իսկ
ինձ վոչ». 3) «Վոչ ինձ և վոչ ել իմ մտից չի կարելի
զանգահարել» (ժիծաղ):

Այն պատահական հանդամանքը, վոր այսօրվա ժո-
ղովը մոմերի լույսի տակ ենք անում, վորը մեզ հի-
շեցնում և 1918 թիվը—և վորի վրա մենք այսօր միայն

* Ճառ, արտասանած 1927 թ. հոկտեմբերի 18-ին «Կարմիր Պուտի-
լովեց» գործարանի Լենինի անվան ակումբում կայացած միտինգին:

ծիծաղել կարող ենք, ցույց է տալիս, վոր մենք շատ ենք առաջ անցել: Բայց և այնպես, հիշելով հեռավոր անցյալը (իսկ տասը տարին քիչ ժամանակամիջոց չենրանք, վորոնք յերեխաներ էյին, պատանիներ են դարձել, իսկ պատանիները — մարտիկներ, զիտակից քաղաքացիներ), — անհրաժեշտ է և ոգտակար, վոր բանվոր դասակարգը վերհիշե մի շարք բնորոշ գծեր Հոկտեմբերից և Փետրվարից:

Խ. Ս. Հ. Մ. բանվոր դասակարգը, Փետրվարին տապալելով ցարական միապետութունը, — մի պատիվ, վոր բաժին ընկավ Լենինգրադի բանվորներին, — ութ ամսվա ընթացքում վարչական մի քանի ձևեր վերապրեց: Նա իշխանության մոտ տեսավ զուտ բուրժուազիային, տեսավ և կոալիցիան, վոր կազմված էր մանր բուրժուազիայից և սոցիալիստ-մենշևիկներից: Հենց վարչական ձևերի այդպիսի տարբերություն և խայտարեցտություն և այդ կառավարությունների դասակարգային եյություն այդպիսի զանազանություն շնորհիվ էր, վոր Լենինգրադի բանվորները ութ ամսվա ընթացքում կարողացան արժանի չափով զնահատել և վերացնել սեֆորմիզի կեղծիքը, այն, ինչ ուրիշ յերկրների բանվորներին այլ պայմաններում տարիներ են հարկավոր:

Իսկպես, ինչ ասես վոր չտեսան Լենինգրադի բանվորներն այդ ութ ամսվա ընթացքում: Նրանց աչքի առաջ էյին կազմակերպվում այդ կառավարությունները: Չարաբաստիկ համաձայնությունը յերկու դասակարգի միջև այստեղ իրականացավ, մի կողմից (հանձինս Լենինգրադի Խորհրդի) բանվոր դասակարգի, և մյուս կողմից (հանձինս ժամանակավոր Կառավարու-

թյան և Պետական Դումայի) բուրժուազիայի միջև: Յերբեք և վոչ մի տեղ սեֆորմիզմը այդպիսի կարճ ժամանակամիջոցում չէր կարող իրեն վարկարեկել և վոչնչացնել, ինչպես այդ ութ ամսվա ընթացքում Լենինգրադում:

Յերկրի քաղաքական կյանքին տոն տվող և իշխանության գլուխ կանգնած մանր-բուրժուական սոցիալիստները քիչ թե շատ խորը սոցիալական և վոչ մի սեֆորմ չկարողացան իրականացնել, կյանքի մեջ անց կացնել. սոցիալիստական ծրագրի այսպես կոչված ծրագրի-միինիմումի ամենատարբական պահանջներից և վոչ մեկը չկարողացան իրագործել: Այդ ութ ամսվա ընթացքում ազգային հարցը անշարժ դրություն մեջ մնաց. դրան վառ ապացույց է Ուկրայինայի և Ժամանակավոր Կառավարությունի միջև յեղած տարաձայնությունը: Ժամանակավոր Կառավարությունը, մենշևիկների ու եսերների կոալիցիոն կառավարությունը չկարողացան լուծել և նույնիսկ չկարողացան մոտենալ հողային հարցի լուծմանը: Գյուղացիության հողի մասին արած բոլոր պահանջներին նրանք խոստումներով էյին պատասխանում, վոր իբր Հիմնադիր ժողովն է դրազվելու այդ հարցերով: Նրանք չկարողացան լուծել բանվորական հարցը, և Լենինգրադի բանվորն ինքը բունի իրավունքով ձեռք բերեց ութ-ժամյա բանվորական որը, իսկ յերբ Լենինգրադի և Մոսկվայի բանվորներն իրագործեցին իրենց այդ որինական իրավունքը, — մանր-բուրժուական սոցիալիստները, նրանց դեմ գրգռելով գյուղացիությունն ու գիւնվորներին, ուղղակի հարձակվեցին բանվորների վրա:

Յերկրի տնտեսական դրուժյունը կարգավորելու բու-
 րոր փորձերը մեկը մյուսի յետևից տապալվում էյին
 հենց նրա համար, վոր իրենց սոցիալիստ անվանող
 մանր-բուրժուազիայի ներկայացուցիչները վոչ մի
 հանդուգն քայլի չէյին համարձակվում դիմել: Նրանք



Ընկ. Մ. Կալինին

չէյին կարողանում (ինչպես դա մենք կարողացանք
 անել) կալվածատերերի՝ ձեռքից խլել հողը, կուլակ-
 ներից վերցնել նրանց մոտ գտնվող հացի պաշարը:
 Մանր-բուրժուազիայի վերաբերյալ նրանք վոչ մի ստի-
 պողական միջոց չկարողացան ստորագրել:

Առաջին հերթին Լենինգրադի բանվորները, գյուղա-
 ցիուլթյան հետ միասին, վերապրելով մի քանի կառա-
 վարուլթյուններ, իշխանուլթյան գրավման բացարձակ
 պայքարի անցան: Ընկերներ, դուք հիշում եք այն
 վեճը, վոր տեղի յեր ունենում Փաբրիկաներում և
 գործարաններում, մանավանդ շատ հաճախ Պուտիլով-
 յան գործարանի թնդանուլթային արհեստանոցում,
 յերբ բոյլշեիկներն իշխանուլթյունը վերցնում էյին:
 Դուք յերեկ հիշում եք բուրժուական մամուլի այն ձիչն
 ու վոռնոցը, վորոնք տեղի ունեցան իշխանուլթյունը
 գրավելուց հետո: Դուք յերեկ հիշում եք նույնպես,
 թե ինչպես Լենինգրադը յերկու թշնամի բանակի յեր
 բաժանվել: Նեայի պրոսպեկտը բուրժուազիայի կեն-
 տրոնն էր, ուր անպատիժ յերևալը յուրաքանչյուր
 բոյլշեիկ բանվորի համար անկարելի յեր: Այնտեղ դա-
 գազած բուրժուազիան ցրում էր բանվորական նույն-
 իսկ ամենափոքր ղեմոնստրացիաները (ցույցերը):
 Մյուս դասակարգի կենտրոնն էր Վրբորդյան կողմը՝
 Նարվայի և Նեայի արվարձանները: Այդ ժամանակ
 բուրժուական մենշևիկյան և եսերական մամուլը կա-
 տաղաբար հարձակվում էր բոյլշեիկների վրա: Մեզ
 խելագարներ էյին անվանում: Մեզ ասում էյին. «Դուք
 իշխանուլթյունը չեք վերցնի, վորովհետև ժամանակավոր
 Կառավարուլթյունն այնպես թուլջ չե, ինչպես այդ ձեզ
 և թվում. իսկ յեթե նույնիսկ ձեզ հաջողվի իշխանու-
 թյունը վերցնել, ապա դուք յերկու շաբաթից ավել
 չեք դիմանա, վորովհետև գյուղացիուլթյունը յերես
 կգարձնի ձեզնից, դուք չեք կարող լուծել ձեր առջև
 դրված տնտեսական խնդիրները: Դյուրացիուլթյան

ամենախոշոր շերտը ձեզ աջակցություն չի ցույց տա, դուք յերկրի տնտեսական կյանքին տիրանալ չեք կարող, առանց այդ տնտեսական կյանքի գլխավոր և իսկական ուժի՝ տեխնիքական ինտելլիգենցիայի, վորը ձեզ հետ՝ բոլորեկիների հետ՝ չի աշխատի: Դուք առանց հմուտ կազմակերպիչների՝ առանց կապիտալիստների և կալվածատերերի չեք կարող աշխատել: Դուք հիմար յերեխաներ եք, — ասում էյին մեզ, — յեթե կարճում եք, վոր նման բարձ ասարատը, ինչպիսին բանկերն են, կարող եք կառավարել. և վերջապես, դուք իշխանությունը չեք կարող պահել, քանի վոր պատերազմից դուրս գալ դուք անկարող եք: Դուք պոռոտախոսներ եք, յեթե հայտարարում եք, վոր պատերազմին հնարավոր է վերջ տալ: Միթե հնարավոր է դուրս գալ պատերազմից: Դուք մինչև վոր վերջ տաք պատերազմին, գերմանացիները կվերցնեն Լենինգրադը: Ձեզ այնպիսի հաշտություն կթելադրեն, վոր գյուղացիները, վրդովված, կապտամբեն ձեր դեմ: Բացի այդ, Անգլիան և Ֆրանսիան պատերազմ կհայտարարեն, վորովհետև դուք կխախտեք այդ յերկրների և Ռուսաստանի միջև յեղած պայմանագրերը»:

Դրա դիմաց մենք պատասխանում էյինք, վոր չենք կասկածում, վոր առաջին իսկ հնարավորության դեպքում բուրժուական Անգլիան և Ֆրանսիան կարող են պատերազմ հայտարարել մեզ. բայց մենք միաժամանակ չենք կասկածում, վոր Անգլիայի և Ֆրանսիայի բանվորները դեմ կլինեն նման պատերազմին, չեն գնա ոռոտական բանվորների դեմ պատերազմելու նրանք, վորոնք իրենց ուսերից դեն են շարտել բուրժուազիային:

Բանվորական իշխանության հենց առաջին քայլերն այն յեղան, վոր նա որինականացրեց, դեկրետով լուծեց կալվածատերերից հողն առնելու և գյուղացիությանը տալու հարցը. դեկրետով հաստատեց ութժամյա բանվորական որը և աշխարհում դեռ չտեսնված բանվորական որենադրությունը: Նա դեկրետով որինականացրեց վոչ միայն ինքնորոշման, այլ նաև յուրաքանչյուր ազգության կատարյալ անջատման իրավունքը. ձեռքի մի հարվածով նա իսպառ վերացրեց կնոջը կաշկանդող բոլոր ուղիները:

Յերբ իշխանությունը վերցնում էյինք, մենք ասում էյինք, վոր մեր հեղափոխությունը մենք չենք համարում իբրև մեր յերկրի սահմաններում ամփոփված նեղ ազգային հեղափոխություն: Մենք հայտարարեցինք, վոր այս հեղափոխությունը միջազգային հեղափոխության սկիզբն է, առաջին շրջանը: Մեր թշնամիները հեզնանքով մեզ հարցնում էյին. «Դուք ասում եք, վոր սա միջազգային հեղափոխության սկիզբն է. ապա պատմեցեք մեզ՝ թե յերբ կլինի հեղափոխությունը Գերմանիայում»: Դուք հիշում եք, ընկերներ, թե ինչպես էյին ծիծաղում մեզ վրա, յերբ մենք պատասխանում էյինք, թե չենք կասկածում, վոր մենք միջազգային հեղափոխության պիտներներն ենք, թեպետ չենք կարող ասել, թե վոր ժամին կամ վոր որն է լինելու Գերմանիայի կամ Ֆրանսիայի հեղափոխությունը: «Այսպիսի յիլ մարգարենք, — ասում էյին նրանք, — գուշակում են անցքերը, բայց չգիտեն թե վորտեղ և յերբ են կատարվելու»: Այժմ, յերբ այժմ բոլորից հետո տասը տարի յե անցել, դուրս յեկավ վոր

մենք ամենահեռատես և առողջամիտ մարդիկ ենք: Իսկ նրանք, վորոնք իրենց հմտությամբ և խելացիությամբ եյին պարծենում, ամենաանպետք մարդիկը դուրս յեկան, վորոնք կյանքից դեպի աղբի պատմական դամբուղը վնասված, կապիտալիստների և կալվածատերերի հետ միասին, Արևմտյան Յեվրոպայի բուրժուազիայի հացկատակների դերում, իրենց վորոմելի գոյությունն են քարշ տալիս:

Յերբ մենք ազգային հարցն եյինք վորոշում, մեզ ասում եյին. «Ձեր նպատակն է անդամահատել քաղաքական, տնտեսական միացյալ որդանիզմը: Դուք Ռուսաստանն առանձին փոքր իշխանությունների յեք ուղում բաժանել. այն, ինչ դարերի ընթացքում է գոյացել, դուք մի շաբաթվա ընթացքում ցանկանում եք քանդել, վոչնչացնել. այն ժամանակ, յերբ դուք հանդես կգաք յուրաքանչյուր ազգության վոչ միայն ինքնորոշման, այլ նաև անկախ կազմակերպության և անջատման իրավունքի ֆորմուլայով, — ամբողջ Ռուսաստանը կքայքայվի»: Իսկ մենք այս բոլորի հանդեպ պատասխանում եյինք: Մենք պրոլետարիատի իշխանություն ենք, մենք դասակարգ ենք, և բոլոր ճնշվածների ու հարստահարվողների իշխանության համար ենք պայքարում: Այս կամ այն ժողովուրդը շահագործելու մեջ մենք յերբեք ել շահագրգռված չենք: Շահագործման վրա պրոլետարական պետությունն չի կարելի կառուցել: Այդ բանի վրա յեն կառուցված կապիտալիստական բոլոր պետությունները, իսկ մի ազգությունը մյուսին ճնշելու գաղափարը ոտար է պրոլետարիատի համար: Յեթե Ռուսաստանն առանձին

մասերի բաժանվեց, ապա մեզ համար միասնականությունը, ամբողջությունը, մեր դասակարգի վերջնական ազատագրման հաջողությունն է կարևոր և վոչ թե պետական այս կամ այն միությունների հարցը:

Իշխանությունը մեր ձեռքն անցնելու հենց առաջին սրբից բռնկեց քաղաքացիական պատերազմը: Իհարկե, բառի բուն իմաստով, մենք չեյինք, վոր իշխանությունը վերցնելուց հետո սկսում եյինք քաղաքացիական պատերազմը: Պուտիլովյան բանվորները, Կերենսկուն Ձմերային պալատից դուրս շարեւելով, յերբեք ել շահագրգռված չեյին, վոր նա «Իիկայա Իիվիդիայի» (վայրի դիվիդիայի) հետ Լենինգրադի վրա արշավելու փորձեր անի: Իսկ յերբ նրանք հարձակվեցին, Գատչինայի տակ բռնկած քաղաքացիական կռվի ֆրոնտն արագորեն անցավ Դոն, Մերձվոլգյան շրջանը, կազակության մեջ և այլն, և այդպիսով ամբողջ յերկիրը բռնկեց քաղաքացիական կռվի հրդեհով: Բայց և այնպես բանվոր դասակարգը նման պայմաններում, քաղաքացիական կռվի հենց առաջին որերից, կտրված հացից, նավթից, յերկաթից և քարածուխից — չեր ընկճվում և իշխանությունը իր ձեռքից բաց չեր թողնում:

Անցավ առաջին, յերկրորդ շաբաթը, — բոլշևիկները, Լենինգրադի բանվորներն իրենց ձեռքին եյին պահում իշխանությունը և վոչ վոքի չեյին հանձնում:

Այն ժամանակ լսվեցին նոր մարզարեյություններ. «Կդիմանաք յերկու-յերեք շաբաթ, իսկ ծայրահեղ դեպքում յերեք ամիս»: Նրանք անկարող եյին հասկանալ, թե ինչպես կարելի յե յերկիր կառավարել, յերբ տեխնիքական ինտելիգենցիան սարսուռ էր

հայտարարել, բժիշկները մեծ մասը չեն ուզում բժշկել, ուսուցիչները չեյին ուզում սովորեցնել, յերբ բանկային ծառայողներն, իրենց հաշիվները թողած, հեռա-



Ընկ. Ի. Ստալին

ցան, յերբ հեռացան և պետական հիմնարկների ծառայողները և այլն... Ճիշտ է — ծանր էր, շատ ծանր, բայց բանվոր դասակարգը չչփոթվեց և կարողացավ իր առջև դրված խնդիրը լուծել:

Անցավ յերեք ամիս: Ուժեղացավ քաղաքացիական պատերազմը, խորացավ, ծավալվեց և սովը: Քաղցից և ցրտից տանջվում էյին բանվորները, բայց շարունակում էյին իշխանությունն ամուր պահել իրենց ձեռքում: Սկսվեցին նոր, մեկը մյուսից ավելի մռայլ մարգարեյություններ: Բոյլշևիկների անկումն ամսե-ամիս ձգձգվում էր. և չնայած դեռ այժմ էլ սպիտակ-զվարդեյական լրագիրները որեցոր, ժամեժամ և ըոպե առ ըոպե բոյլշևիկների անկումն են սուլում, մենք շարունակում ենք լսել այս մարգարեյությունները, և անա տասը տարի յե մենք ամուր պահում ենք մեր ձեռքում իշխանությունը:

Գյուղացիության հարցում բոյլշևիկների վերցրած ուղիղ գծի շնորհիվ եր միայն, վոր անտեսապես հետամնաց մի խոշոր յերկրում, ուր գյուղացիությունը մեծամասնություն է կազմում, մի յերկրում, վորը քաղաքացիական կռիվ էր բռնված, բաժանված առանձին և անկախ պետությունների, — բանվոր դասակարգը բայց և այնպես կարողացավ իր ձեռքին պահել իշխանությունը և դա պաշտպանել բոլոր տեսակի ինտերվենցիաներից — ամերիկացիների, Ֆրանսիացիների և անգլիացիների գորեղ բանակներից: Միայն բանվոր դասակարգի և գյուղացիության սերտ դաշինքի շնորհիվ էր, վոր այս բոլորը հնարավոր դարձավ: Չնայած բանվորական դիկտատուրայի, բանվորական իշխանության ձեռք առած մի շարք միջոցները (ինչպես, որինակ, պարենատուրքը, բռնագրավող խմբերը և այլն) զգալի չափով դիպչում էյին գյուղացիության շահերին, բայց և այնպես նա գնում էր բանվոր դա-

սակարգի հետ, վորովհետև կարվածատիրական, վանքապատկան և մասնատիրական հողերի բռնազրավման և հողերը գյուղացիութեանը հանձնելու Խորհրդային կառավարութեան այդ առաջին հեղափոխական գործերը ցույց տվին բանվորական իշխանութեան բնույթը, իբրև աշխատավորութեան բարեկեցութեանը ձգտող մի իշխանութեան. այդպիսի հանգամանքն ապահովեց գյուղացիութեան հետ մեր ունեցած սերտ և անքակտելի դաշինքը: Մեր թշնամիները, չհասկանալով այդ միութեան ուժն ու արժեքը, հեգնանքով մեզ ասում էին. «Միայն խելագար մարդիկ կարող են հուսալ, վոր գյուղացիութեան հետ միասին հնարավոր է սոցիալիստական հեղափոխութիւն կատարել: Հողը վերցնելուց հետո գյուղացին թքել անգամ չի ուզի մնացած բոլորի վրա. հողը վերցրեց, նա այլևս չի կուլի ազատութեան համար և դեմ կգնա սոցիալիզմին»:

Բայց մենք, հեղափոխութեան հենց առաջին տարիներից, Լենինի հմուտ ղեկավարութեամբ իրագործեցինք բանվոր դասակարգի և գյուղացիութեան դաշինքը, կարողացանք դա պահպանել տասը տարի, վորովհետև աշխատավորութեան իշխանութեան ուժի և գորեղութեան գաղանիքը բանվոր դասակարգի և չքավորների ու միջակ գյուղացիութեան մեծամասնութեան յեղբայրական դաշինքում և կայանում, — մի դաշինք, վոր ուղղված է կուլակների և շահագործողների դեմ:

Այս տասը տարվա ընթացքում, հեղափոխութեան առաջին տարիներին, առաջին ամիսներին մեր թշնամիներն իսկապես վոր քայքայեցին հին պետական միութիւնը՝ հին Ռուսաստանը, դա վերածելով մի

քանի անկախ պետութիւնների: Նրանք այդ պետութիւնը հասցրին համարյա Հին Մոսկովյան մեծ իշխանութեան չափերի: Խորհրդային իշխանութեան սահմանները վերջանում էին — մեկ սահմանը՝ Լենինգրադից վոյ հեռու, իսկ մյուսը՝ Մոսկովայից վոյ հեռու, Յարուսլավլի մոտ: Ազգային հարցում բոլշևիկների տարած պրոլետարական ճիշտ գծի շնորհիվ, այդ գծի անկեղծութեան շնորհիվ, յուրաքանչյուր ազգութեան համար լիովին ազատ ինքնորոշման իրավունքը գործնականում հաստատ կիրառելու շնորհիվ մենք ի մի հավաքեցինք գորեղ պետական կառուցվածքը, ստեղծեցինք ուժեղ պետութիւն՝ հիմնված նոր սկզբունքի — բոլոր ազգութիւնների սերտ յեղբայրական ընկերակցութեան սկզբունքի վրա: Հին Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդներին ցարական կառավարութիւնը մեկ միացյալ պետութեան մեջ էր պահում՝ ազգային կուլտուրայի ճնշման և ազգային կազմակերպութիւնների ավերման և բռնութեան ճանապարհով: Ապահովելով բոլոր ազգութիւնների ազգային կուլտուրայի զարգացումը, և վոյ միայն նրանց ինքնորոշման, այլև ընդհանուր պետական կառուցվածքից բաժանվելու իրավունքը, բանվոր դասակարգը ստեղծեց իր հզորութեամբ դեռ պատմութեան մեջ չտեսնված մի պետութիւն:

Հին բուրժուական կառավարութիւնից և մանրբուրժուական մասնագետներից մենք ժառանգեցինք անտեսապես քայքայված մի յերկիր, հանգած գործարաններ, սով, համաճարակ և ավերում: Միաժամանակ, տանելով և ներքին քաղաքացիական կռիվը, մի շարք

տարիներ մենք ստիպված յեղանք պատերազմելու կուլտուրական և հզոր պետությունների դեմ: Բայց, չնայած այս բոլորին, մենք վոչ միայն պահեցինք իշխանությունը, վոչ միայն նախապատերազմական չափերի հասցրինք արդյունաբերությունը, այլ և վերջին յերկու-յերեք տարիների ընթացքում չորս և կես միլիարդ ուրբի դրամ մտցրինք մեր գործարանային նոր շինարարության մեջ, անցյալում չտեսնված չափով բարձրացնելով մեր տեխնիկան, մեր անտեսությունը: Մենք հիմք դրինք և չտեսնված թափով զարգացրինք մեր յերկրի էլեքտրիֆիկացիայի ծրագիրը: Մենք անցանք պլանային անտեսության: Ահա ձեզ մեր տասը տարվա անտեսավարության արդյունքների ամենահամառոտ, ամենաթուղթիկ տեսությունը:

Տասը տարի առաջ մենք ասում էյինք, վոր մեր հեղափոխությունը միջազգային բանվորական, պրոլետարական հեղափոխության սկիզբն է. մեր յերկրի բանվոր դասակարգին, ամբողջ աշխարհի բանվորներին մենք ասում էյինք, վոր իշխանությունը մենք վերցնում ենք նրա համար, վորպեսզի այդ իշխանության միջոցով ջախջախենք շահագործողների բռնությունը, ապահովենք սոցիալիզմի կառուցումը և ոգնենք բանվոր դասակարգին և բոլոր ճնշվածներին՝ լիովին ազատագրվելու համար, անկախ այն հանգամանքից, թե նրանք վորտեղ և ինչպիսի պայմաններում են պայքարում:

Մենք իրավունք ունենք մեզ հարցնելու, թե արդյոք այս տասը տարվա ընթացքում Սորհրդային իշխանությունը և հոմունիստական կուսակցությունը պահեցին

իրենց խոստումը: Մենք տեսանք, թե ինչպես մենշեիկները, եսերները և մանր-բուրժուական այլ կուսակցությունները 1917 թվի փետրվարից մինչև հոկտեմբեր քարշ էյին գալիս բուրժուազիայի յետևից, ինչպես քարշ են գալիս և այսօր Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրներում: Մենք տեսանք, թե ինչպես պատերազմի և միջազգային քաղաքականության այդպիսի կարևորագույն հարցում նրանք լիովին և ամբողջովին, միայն ուրիշ անվան տակ, ցարական կառավարության և բուրժուազիայի գիծն էյին անցկացնում. նրանք, շարունակելով իմպերիալիստական պատերազմի քաղաքականությունը, բանվոր դասակարգին կոչ էյին անում կողմնակից լինել այդ պատերազմին: Այն քաղաքականությունը, վորը վարում էյին մանր-բուրժուական սոցիալիստները՝ Միլյուկովից սկսած մինչև Կերենսկին, Մարտովը և Դանը, սկզբունքորեն և ըստ էյություն վոչնչով չեր տարբերվում բուրժուական պետության կամ ցարական կառավարության քաղաքականությունից: Միայն խորհրդային իշխանությունը, այդ իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգը ցույց տվեց ամբողջ աշխարհին միջազգային քաղաքականության և պետական պրոլետարական դիվանագիտության նոր սկզբունքները:

Յուրաքանչյուր բուրժուական կառավարության միջազգային քաղաքականության և դիվանագիտության էյությունը կայանում է նրանում, թե ինչպես շահել մի վորևե այլ ժողովրդի և պետության հաշվին: Միևնույն է, թե ինչով կարողանայտվի այդ շահումը,

1003
ՄԻՇԻՆ
58-588/



լինի դա տերիտորիալի գրավումով, կոնտրիբուցիա վերցնելով, հարևան յերկիրը գաղութային դրուժյան մատնող անհավասար պայմանագիր կնքելով կամ մի վորևե յերկրի վզին փաթաթած տնտեսապես վոչ ձեռնտու կոնցեսիաներով, միայն թե շահել, ավելի թույլ յերկրի հաշվին հարստանալ: Վորևե բուրժուական պետության միջազգային քաղաքականության որենքը—զինվորական, կուլտուրական և տնտեսական տեսակետից ավելի թույլ և հետամնաց հակառակորդին ճնշելու և խաբելու վրա յե հիմնված:

Միայն նախկին Ռուսաստանի—ներկայումս ԽՍՀՄ բանվոր դասակարգն էր, վոր իր ձեռքն առնելով իշխանությունը, առաջին անգամ աշխարհում ցույց տվեց միջազգային քաղաքականության նոր սկզբունքները, նա հայտարարեց, վոր հրաժարվում է տերիտորիալ առավելություններից, հետամնաց ժողովուրդների ճնշումից և ամեն տեսակի անեկսիայից ու կոնտրիբուցիայից: Սկզբում մեզ ապուշների տեղ եյին դնում, ծիծաղում եյին մեզ վրա և հայտարարում. «Նման սկզբունքով դուք շատ հեռու չեք գնա: Միթե այդպես կարելի յե պետություն ղեկավարել, յերբ ուրիշներից տերիտորիա վերցնելու փոխարեն ինքներդ եք տալիս ուրիշներին: Ձեզ շարունակ պահանջներ կնեղկայացնեն, իսկ դուք վոչ. այդպես և աշխարհի բանը. յեթե, քո ոճիքից բռնած, քեզանից վերցնում են, ապա շնորհք ունեցիր դու յել ուրիշների ոճիքից բռնել և վերցնել այն ամենն, ինչ վոր հնարավոր է»:

Տասը տարի յե, ինչ գոյություն ունի Խորհրդային պետությունը, տասը տարի յե, ինչ մենք կառավարում

ենք աշխարհի ամենախոշոր պետությունը, բայց չնայած դրան, աշխարհում այժմ վոչ մի բանվոր չի կարող անգամ մտածել, վոր հարմիր բանակը, խորհրդային դիվանագիտությունը յերկրագնդի վորևե մասում, վորևե տեղ կարող են հանդես գալ թույլերին, հարստահարվածներին ճնշողի դերում, վոր աշխարհի վորևե մասում մեր պետության դիվանագիտական ներկայացուցիչները կարող են այնպիսի քաղաքականություն վարել, վորն ուղղված լինի այս կամ այն ժողովրդին ճնշելու կամ նրան տնտեսապես թուլացնելու կողմը:

Տասը տարի յե անցել, և մենք իրավունք ունենք մեզ հարցնելու, թե այս քաղաքականությունը թուլացրե՞լ և արդյոք մեր պետությունը, կորցրե՞լ ենք արդյոք մի վորևե բան այդ քաղաքականությունից:


Միջազգային հեղափոխությունը մենք յերբեք ել չենք համարել, ինչպես և չի համարել հանգուցյալ Վլադիմիր Իլյիչը, իբրև մի շարք պետություններում բուպեյական և միաժամանակ հեղափոխական պայթյուն: Միջազգային բանվորական հեղափոխությունը մենք միշտ ել պատկերացրել ենք իբրև մի վորոշ յերկարատև շրջան, ուր վոչ միայն առաջնակարգ կապիտալիստական յերկրների պրոլետարիատն է մասնակցում, այլ բազմազան ձևերով մասնակցում են և ավելի հետամնաց, ավելի ճնշված և գաղութային անճար ժողովուրդները: Հենց դրա համար ել Վլադիմիր Իլյիչը շարունակ խոսում էր վոչ միայն պրոլետարիատի ապստամբության, այլ նաև ճնշվածների և կեղեքվածների ապստամբության մասին, այսինքն գաղութային և կիսագաղութային այն ժողովուրդների մասին,

վորոնց ամենաանխնա կերպով շահագործում է իմպի-
րիալիզմն ու խանգարում նրանց նորմալ զարգացմանը.
ժամանակակից կապիտալիզմի կողմից զանազան ձևե-
րով ճնշվածների ապստամբութեան առավակները ձրգ-
տում են լցվելու բոլոր շահագործվողների մեկ գորեղ
հունի մեջ, վորն ուղղված է բոլոր շահագործողների դեմ:

Յեվ յեթե մենք մեր միջազգային քաղաքականու-
թյան զնահատմանը մոտենանք այդ տեսակետից, ապա
անհրաժեշտ է ասել, վոր մեր մոտակա դաշնակից-
ները, բոլոր յերկրների պրոլետարիատի, միջազգային
իմպերիալիզմի կողմից շահագործվողների և ամբողջ
աշխարհի հանդեպ այս տասը տարվա ընթացքում մենք
խոշոր հեղինակութուն ձեռք բերինք: Դեռևս չկա և չի
յեղ կարող լինել մի պետութուն, վոր ճնշված ազգու-
թյունների մեջնման հեղինակութուն ունենա, ինչպիսի
հեղինակութուն ունի Խորհրդային պետութունը:

Կապիտալիզմի, շահագործողների դեմ բանվորական
գործի համար պայքարող յուրաքանչյուր մարտիկի
համար աշխարհում միայն մեկ յերկիր կա, դա—Խոր-
հրդային յերկիրն է, վորտեղ նա իրեն զգում է այնպես,
ինչպես իր սեփական տանը: Խորհրդային յերկրում
գոյութուն ունի աշխարհի միակ հեղափոխական կազ-
մակերպութունը, Կոմունիստական Ինտերնացիոնալը,
վորը ղեկավարում է շահագործողների դեմ ուղղված շա-
հագործվողների պայքարը: Յեթե Խորհրդային յերկիրը
ապաստարան է բոլոր նրանց համար, ովքեր պայքարում
են կապիտալի դեմ, ապա մեր սահմաններից դուրս
զանվող յերկրները ապաստարան են նրանց համար,
ովքեր բանվոր դասակարգի դեմ են պայքարում: Ահա

ձեզ տասը տարվա մեր աշխատանքի արդյունքները:
Մենք տեսնում ենք, վոր մեր յերկիրը տարեց-տարի



Ընկ. Ա. Ռիկով

բոլոր յերկրների մարտիկների հարազատ բնակա-
վայրը, հայրենիքն է դառնում: Յեթե Արևմտյան Յեվրո-
պայի բանվորներին խաբելու համար սկզբնական

շրջանում Սորհորդների հանրապետութունների մասին պատմում ելին անասպեղներ, վորոնց վրա այսոր կարելի յե միայն ծիծաղել, պատմում ելին, վոր իբր Լենինգրադում, Նևայի պրոսպեկտում արջեր են վազում, վոր մեզ մոտ կանանց ազգայնացրել են, վոր մենք համարյա մարդակերության ենք հասել, այսոր Եյրպիսի հիմարութուններ այլևս չեն համարձակվում ասել, վորովհետև նրանց վոչ վոք չի հավատում: Պատովեց իմպերիալիստների կողմից կազմակերպված բրոկադայի ողակը, վորով նրանք աշխատում ելին մեր պայքարի յերկրորդ շրջանում մեզ չեզոքացնել Արևմտյան Յեվրոպայի բանվորներից: Արևմտյան յերկրները բանվորները ներկայումս իրենց պարտքն են համարում տեսնել Կարմիր Մոսկվան և Կարմիր Լենինգրադը: Ամբողջ աշխարհի բանվորները ֆարբիկաներում և գործարաններում, ամեն տեղ, ուր քիչ թե շատ բանվորութուն կա, ընդհանուր ժողովներում պատգամավորներ են ընտրում, իրենց աշխատավորական վերջին կոպեկներն են հավաքում, վորպեսզի այդ պատգամավորները հնարավորութուն ունենան գալու Սորհորդային յերկիրը և իրենց սեփական աչքով տեսնելու, թե ինչպես են պայքարում և ապրում ուս բանվորները, տեսնելու՝ թե գործնականում նրանք ինչպես են սոցիալիզմ կառուցում: Մենք բոլորս ել գիտենք, վոր մեզ շատ բան է պակասում, վոր դեռ այնքան ել լավ չենք ապրում, ինչպես դա մենք ենք ուզում: Բանվորների տնտեսական դրությունն առ այժմ վատ է, գործարանները մաշված են. կարիք՝ վորքան ուզեք. չտեսնված սուր վիճակի մեջ է բնակարանային

հարցը—և ուրիշ մի շարք պակասութուններ և բացեր, վորոնց դեմ մենք հերոսական պայքար ենք մղում:



Ընկ. Ն. Բուխարին

Բայց, չնայած այդ ամենին, վերոհիշյալ բոլոր փաստերն այնպես են զարկում Արևմտյան Յեվրոպայի կապիտալիզմից ճնշված բանվորների աչքին (վորոնցից

մի քանիսը մեզանից ավելի շատ աշխատավարձ են ստանում), վոր նրանք, վերադառնալով տուն և պատմելով այն ամենն, ինչ վոր տեսել են, հեղափոխականացնում են հարյուրավոր, հազարավոր և միլիոնավոր բանվորներին: Նրանք ասում են. «Մեզ խաբուժեցին. ուես բանվորները վոչ թե վատ, այլ փառահեղ գործ են կատարել, ժամանակ ե, վոր մենք ել նույն բանն անենք մեզ մոտ»:

Տասը տարի յե անցել այն ուրից, ինչ բանվոր դասակարգն իշխանությունն իր ձեռքն ե առել. սակայն այժմ, տասը տարուց հետո, մենք դեռ չենք կարող առել, վոր մեր միջազգային դրությունն այնքան լավ ե, վոր, ապրելով կապիտալիստական շրջապատում, մեր դրությունն այնքան ե լավացել, վոր կարող ենք հանգիստ կյանք վարել: Իհարկե, վոչ. տասնամյակի հորելյանին Խ.Ս.Հ.Մ. և կապիտալիստական աշխարհի հարաբերությունները չափազանց լարված են: Կապիտալիստական աշխարհի հարաբերությունները մեր պետության, Սորհրդային իշխանության հետ ունեցել են յերեք շրջան. առաջին շրջանը—դա զինված ուժով, ինտերվենցիայի միջոցով կապիտալի դեմ ապստամբած ստրուկներին խաղաղացնելու և իշխանությունը հին բռնակալներին վերադարձնելու փորձն եր: Ռուս բանվորները, գյուղացիների ոգնությամբ և Արևմտյան Յեվրոպայի բանվորական լայն մասսաների բարոյական աջակցությամբ, յետ մղեցին ինտերվենցիան և կիսաքաղց, կիսամերկ ու վատ զինված բանակով, բացարձակ պատերազմում ջարդեցին կապիտալիստական պետությունների տեխնիքապես հրաշալի զինված

բանակները: Հոկտեմբերին՝ իշխանությունը մեր ձեռքը վերցնելու ժամանակ՝ մեր արած գուշակությունն այստեղ ևս արդարացավ, իսկ կապիտալիստական պետությունները, մեզ պատերազմ հայտարարելով, արդարացրին մենչևիկների և եսերների հույսերը: Հանձինս Ողեսսայում ապստամբած մատրոսների և անդլիական ու Ֆրանսիական բանվորների, անգլիական և Ֆրանսիական զինվորներն արդարացրին մեր գուշակությունները: Շնորհիվ այն բանի, վոր բանվորները չցանկացան կռվել մեր դեմ, մենք յետ մղեցինք ինտերվենցիան. հզորագույն պետությունների բանակները ստիպված եյին հավաքել իրենց ուժերը և հեռանալ, և այն ել այնպես շտապ կերպով, վոր մեզ մոտ թողեցին մի մասը իրենց տանկաների, վորոնք այսօր մեր զորահանդեսներին զարդարում են Կարմիր հրապարակը:

Ուղղակի հարձակումը չհաջողվեց. նրանք անցան կռվի յերկրորդ շրջանին՝ բլոկադային, մեզ տնտեսապես չեզոքացնելու փորձերին՝ բոյկոտին: Բայց կապիտալիստը մտում ե կապիտալիստ: Իբրև դասակարգ նա կարող ե բավականին յերկար ժամանակ կռվել, բայց իբրև կապիտալիստ, յուրաքանչյուրն առանձին, յերկարատև չի կարող շարունակել նման կռիվը, վորովհետև դա խոշոր զլաս ե հասցնում նրա գրպանին: Կապիտալիստներին ձեռնտու յե ուղղակի պատերազմը. վերցնել և գնդակահարել, բայց յերկար տարիներ առևտուր չանել, չչահել՝ դա նրանց համար անողուտ պայքար ե, վորի հետևանքով նրանք նման կռից հեռզհետև սկսեցին հրաժարվել: Այդ ժամանակ մենք

անցանք յերկրորդ շրջանը. մեզ՝ իբրև մի պետութեան՝ սկսեցին ճանաչել, սկզբում անուղղակի և ապա ուղղակի ճանապարհով: Դա մեծ մասամբ կատարվեց նրա համար, վոր կապիտալիստական կառավարութիւնները, բուրժուական կուսակցութիւնները և մանրբուրժուական սոցիալիստներն այնպես եյին կարծում, վոր մենք, Նեպի շրջանն անցնելուց հետո, աստիճանաբար կվերասերվենք և սոցիալիստական իշխանութիւնից կդառնանք մանր-բուրժուական և ապա բուրժուական իշխանութիւն, սոցիալիզմի փոխարեն կսկսենք կապիտալիզմ կառուցել: Բայց վերջին տարիները տնտեսական հարաբերութիւնները մեզ մոտ սկսեցին բոլորովին այլ ուղղութեամբ զարգանալ. տարեց-տարի սկսեցին ուժեղանալ բանվոր դասակարգի հրամանատարական բարձունքները. ուժեղանում, աճում և ամրանում եր սոցիալիստական, համայնացրած մեր պետական արդյունաբերութիւնը. նա գյուղատնտեսութիւնից, մասնատիրական և կոնցեսիոն արդյունաբերութիւնից ավելի արագ եր զարգանում: Պետական առևտուրը հետզհետե սկսում ե նեղել մասնավոր առևտրին, վորը ստիպված եր մեկը մյուսի յետևից զիջել իր դիրքերը պետական առևտրին և կոոպերացիային: Համայն աշխարհի համար պարզ ե, վոր մեր տնտեսական զարգացումն ընթանում ե բուրժուակալի համար վոչ ցանկալի ուղիով: Բուրժուակալի սպասում եր, վոր Նեպի շնորհիվ մեզ մոտ կսկսի աճել մասնավոր կապիտալը, վորը կսկսի ստեղծել արդյունաբերական կապիտալ, իսկ արդյունաբերական կապիտալը, հետզհետե իր ձեռքը ձգելով հրամանատարա-

կան բարձունքները, կճեղքի այն պատնեշը, վորը խանգարում ե մասնավոր կապիտալին զոդումն հաստատել մանր արտադրողի հետ. սրա հետևանքը կլինի այն, վոր կապիտի մասնավոր կապիտալը կաշկանդող այն ողակը, վորն արտաքին առևտրի մենաշնորհ ե կազմում, և ամեն ինչ դարձյալ կգնա հին կարգով: Նախընթաց տարիները ցույց տվին, վոր արտաքին առևտրի մենաշնորհը, իբրև անսասան պատնեշ, պաշտպանում ե մեր արդյունաբերութիւնը Արևմտյան Յեվրոպայի արդյունաբերութեան մրցումից, արգելում ե Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստներին, բուրժուակալիստ մոտենալ գյուղացիութեանը, մոտենալ մանր արտադրողին:

Ճիշտ ե, Հոկտեմբերյան հեղափոխութեան տասներորդ տարեդարձի, Սորբոնային իշխանութեան տասնամյա հորեկյանի նախորդակին մի քանի անձանց ուղեղները մի փոքր մթագնեցին, և նրանք սկսեցին հարց տալ. «Թեև արդյունաբերութիւնը պետական ե, բայց արդյոք նա իսկապէս սոցիալիստական ե»: Սրա դեմ ինչ կարելի յե պատասխանել նրանց, վորոնք չեն ըմբռնել յուրաքանչյուր բանվորին հասկանալի հասարակ ճշմարտութիւնը, վոր այն արդյունաբերութիւնը, վոր զանվում ե պրոլետարիատի ձեռքին և այդ պետութեան մեջ իշխանութիւնը պատկանում ե բանվոր դասակարգին, նման արդյունաբերութիւնը բացի սոցիալիստականից ուրիշ կերպ չի յել կարող լինել, վորովհետև նրան վորոշողը վոչ թե գործարանի ներքին այս կամ այն պայմաններն են, այս կամ այն կանոնները, կամ արդյունաբերութեան տեխնի-

կայի և բնույթի բարձր լինելը, նրան բնորոշողը—վոչ թե աշխատանքի պայմանները կամ աշխատավարձի չափն է, այլ այն փաստը, վոր այդ արդյունաբերությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքին: Մեր դասակարգային արդյունաբերությունը, բացի սոցիալիստականից, ուրիշ ուղիով դարգանալ չի կարող:

Կապիտալիստական պետությունների և մեր փոխհարաբերությունների վերջին շրջանը—կապիտալիստական աշխարհի համար վորոշ տեսակի հուսախաբություն է: Մոտք անգամ լինել չի կարող, վոր նրանց հարաբերություններում մեծ դեր եյին խաղում այն յենթադրությունները, վոր իբր թե մենք կվերասերվինք, կապիտալիստական աշխարհի հետ ունեցած շփման պրոցեսում կհրաժարվենք պրոլետարական մեր վատ սովորություններից և մեզ կպահենք այնպես, ինչպես կարգին դիվանագետներ, բուրժուական, կապիտալիստական լավ մարդիկ, վորոնց հետ բուրժուական դիվանագետները հնարավորություն կունենան ցարի ժամանակվա պես առևտուր անել Չինաստանը և Պարսկաստանը բաժանելու մասին և այլն... Հույս ունեյին, թե վորևե կերպ բավարարելով մեզ, թույլ և հետամնաց ժողովուրդների հաշվին կարող են մի վորևե բան ստանալ մեզանից: Նրանք այնպես եյին կարծում, վոր մեզ՝ բոյլշեիկներին համար ամենակարևոր հարցը, դա—խլխանությունը պահելու, նրա ազդեցությունը, հեղինակությունն ուժեղացնելու հարցն է. իսկ ինչ վերաբերում է նրան, վոր մենք կոմունիզմի, բանվոր դասակարգի մասին ենք խոսում, դա միայն ձևականության համար է. չէ՞ վոր բուրժուա-

զիան ինչ ասես վոր չի ասում իր ընտրողներին, պարլամենտի ընտրությունների ժամանակ, և ամեն դեպքում խաբում է նրանց:

Նրանք չարաչար սխալվեցին: Յուրաքանչյուր տարին միայն հաստատում, շեշտում էր այն հանգամանքը, վոր կապիտալիստական պետությունների և մեր պետության միջև, վորի գլուխ կանգնած է վարձու բանվորների դասակարգը, վորը շահագրգռված է ամբողջ աշխարհում կապիտալիզմը, իմպերիալիզմը տապալելու մեջ, և վոր պրոլետարիատի ու շահագործողների դասակարգի, շահագործողների պետության և ապստամբված ստրուկների պետության միջև քիչ թե շատ կայուն և հաստատուն հաշտություն չի կարող լինել: Մեր և կապիտալիստական պետության միջև միայն ժամանակավոր հաշտություն, ժամանակավոր հանգստություն կարող է լինել, բայց խոսք անգամ չի կարող լինել կայուն, հաստատուն խաղաղության մասին: Ծիշտն ասած, մենք ամեն մի կապիտալիստական պետությանը կարող ենք ասել, վոր մենք նրանց չենք խեղդում, չենք նեղում միայն նրա համար, վորովհետև չենք կարող: Ձեզ հետ միասին մենք մեծ հաճույքով ամեն մի բուրժուական պետության բզից բռնած ծնկաչոք կանեյինք, բայց չենք անում, վորովհետև դրա համար դեռ ուժ չունենք, վորովհետև Արևմտյան Յեվրոպայի պրոլետարիատը դեռևս բավականին ուժեղ չէ: Մեր ամենաանկեղծ ցանկությունն է, վոր կապիտալիստների հետքն աշխարհում չերևա (ծափահարություններ): Իսկ նրանց ջերմ ցանկությունն է՝ մեր ոճիքից բռնած մեզ ծնկաչոք անել և մեր փոխարեն

կապիտալիստներին և կալվածատերերին նստեցնել: Այս
յերկու տարբեր աշխարհի միջև միթե կարող է կայուն
հաշտութիւն լինել: Վոչ, չի կարող: Հում նյութի,
արտադրութեան միջոցների կարիքը մեզ ստիպում
է առևտուր անել բուրժուական պետութիւնների
հետ: Նրանց նույնպես հարկավոր է մեր հում նյութը,
վորի անհրաժեշտութեան հետևանքով նրանք ստիպված
առևտուր են անում մեզ հետ: Առևտրի միջոցով մենք
ցանկանում ենք վերականգնել, լայնացնել մեր յերկրի
արտադրութիւնը, սովորել ինքներս պատրաստելու
այն մեքենաները, վորոնք մենք գնում ենք այսօր,
ստեղծել նոր ֆաբրիկաներ և գործարաններ: Իսկ մեր
հարաբերութիւնների էյութիւնը, մեր դասակարգային
հարաբերութիւնները նույնն են, ինչ վոր անցյալում:
Մենք հարմար ընկել ենք սպասում, յերբ Արևմուտքի
բանվոր դասակարգը կբռնի իր շահագործողների
ոճիքից, իսկ կապիտալիստները նույնպես առիթի յեն
սպասում, և հենց առաջին հնարավորութեան դեպքում
պատրաստ են բռնել ու մեր ոճիքից:

Վերջին տարիները չմեղմացրին այդ հարաբերու-
թիւնները, այլ, ընդհակառակն, ավելի լարեցին: Մա-
նավանդ վերջերս մեր հարաբերութիւնները սրվեցին
ամենահզոր և ամենագիշատիչ կապիտալիստական պե-
տութեան հետ: Առիթ ծառայեց չինական հարցը, վորի
շուրջն ընդհարվեցին Խ.Ս.Հ.Մ. և Անգլիայի միանգա-
մայն հակադիր քաղաքականութիւնները: Անգլիան
անհավասար պայմանագրերի կողմնակից է. նա ցան-
կանում է վտանահարող պայմանագրեր փաթաթել չի-
նական ժողովրդի վզին: Անգլիան ցանկանում է մաս-

մաս անել Չինաստանը, Անգլիան ոգնում է չինական
միլիտարիստներին, վորոնք Չինաստանը բաժանել են
մի շարք մասերի, մի շարք փոքր Չինաստանների:
Անգլիան ֆեոդալներին տապալելու, կալվածատերերից
հողը գրավելու և իրենց ազգային ազատագրութեան
համար ապստամբած չինական գյուղացիների դեմ է:
Անգլիան ուժեղ Չինաստանի դեմ է:

Մենք անհավասար պայմանագրերի և չինական ժո-
ղովրդի ճնշման դեմ ենք. մենք ազգայնորեն ազատա-
գրված միացյալ Չինաստանի և միլիոնավոր մանր
գյուղացիութեան կողմնակից ենք. մենք չինական ժո-
ղովրդին շահագործողների և միլիտարիստների դեմ ենք:

Ահա ձեզ յերկու քաղաքականութիւն: Ցարական
կառավարութեան, չին ղեկանազիտութեան ժամանակ,
յեթե մեր պետութեան գլուխ կանգնած լինեյին Կե-
րենսկին, Չերնովը, Մարտովը և Դանը, նրանք կհա-
մաձայնվեյին Անգլիայի հետ. «Ահա ձեզ մի կտոր Հա-
րավային Մանջուրիայից, իսկ դրա փոխարեն մեզ
տվեք մի կտոր Հյուսիսային Մանջուրիայից, փո-
խադարձ համաձայնութեամբ. այս պատառը դուք
վերցրեք, իսկ դրա փոխարեն ահա այս տվեք մեզ»:
Ո՞ւմ ինչ գործն է թե կա չինական ժողովուրդը և
կամ նա ազատագրական պայքար է մղում իմպերիա-
լիզմի դեմ:

Իսկ յերբ իշխանութեան գլուխ է կանգնած բանվոր
դասակարգը, վորը պաշտպանում է ճնշվողների՝ ճնշ-
ողների դեմ ուղղված պայքարը, և իմպերիալիզմի
դեմ յեղած ամեն մի պայքարը միակ ճշմարիտ պայ-
քարն է համարում, մեր և բուրժուազիայի քաղաքա-

կանութեան հակասութեանը միանգամայն պարզ, հասկանալի և անխուսափելի յե դառնում:

Վերջնենք, որինակ, բուրժուազիայի ներքին քաղաքականութեան հարցը: Մենք ակնատես եյինք, թե ինչպես մոտիկ անցյալում զարգանում եր անգլիական բուրժուազիայի կողմից շահագործվող անգլիական ածխահատների պայքարը: Անգլիական կառավարութեանը և ամբողջ աշխարհին տոն տևող բուրժուական տիրող Անգլիան, ածխահատների ճնշման, նրանց նյութական դրութեան վատթարացման և աշխատավարձի կրճատման կողմնակից եր, վորովհետև այլ կերպ նա անկարող եր մրցել Գերմանիայի և ուրիշ եփան ածուխ մատակարարողների հետ:

Մենք, Ս. Ս. Հ. Մ. բանվոր դասակարգը անգլիական ապստամբ ածխահատների և նրանց հաղթանակի կողմնակից եյինք: Յերբ II Ինտերնացիոնալի ներկայացուցիչները խղճալիորեն փսփսում եյին այն մասին, թե «խեղճ հանքային բանվորները անհավասար պայքարի յեն բռնվել», այդ ժամանակ միակ ուժեղ ձեռքը, վորը պաշտպանում, ոգնում եր ածխահատներին, դա Մոցիալիստական Սորհրդային Հանրապետութեաններից մեկնած պրոլետարիատի ձեռքն եր: Այս բոլորն անգլիական բուրժուազիայի համար վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հակասութեանների ել ավելի լարվածութեան: Նրանք սպասում եյին, վոր մենք մեզ այնպես կպահենք, ինչպես մյուս լավ պետութեանները, բայց մենք մեր բարեկամական սովորութեաններից իսկի չենք ել պատրաստվում հրաժարվել: Ամենուրեք, վորտեղ իմպերիալիստները բռնում են բանվոր դասակարգի ոճի-

քից, Սորհրդային յերկիրն ոգնութեան ձեռք ե մեկնում: Ահա ձեզ առաջին անհաշտ և անուղղելի հակասութեանը, վորի վերացնելն անհնար ե: Այժմ, մեր տասնամյակի հորելյանի նախորդակին, կապիտալիստական աշխարհի հետ ունեցած մեր փոխհարաբերութեանները մի նոր շրջան են մտնում: Նրանք փորձում են հավաքել մեր դեմ բոլոր ուժերը և Ֆինանսական, ապրանքային բլոկադայի և նույնիսկ դինված հարձակման ճանապարհով նրանք աշխատում են մեզ դեպի պատերազմ մղել: Պեկինի մեր ներկայացուցչութեան վրա յեղած հարձակումը մեզ դեպի պատերազմ մղելու մի փորձ եր: Գրգռելով չինական միլիտարիստներին մեր ներկայացուցչութեան վրա հարձակվելու, նրանք հավատացած եյին, վոր մենք, իբրև մեծ պետութեան, մեր հեղինակութեան հասցրած վերավորանքի դիմաց չինական ժողովրդին անմիջապես պատերազմ կհայտարարենք:

Բայց մենք այլ կերպ ենք հասկանում հեղինակութեանը: Տասը տարվա ընթացքում մեր քաղաքականութեանը յեղել ե, կա և կմնա իբրև ամենախաղաղ քաղաքականութեան. ինչ կերպ ել նրանք աշխատեն մեր վզին պատերազմ փաթաթել, մենք խուսափել ենք և կխուսափենք նրանից: Մեզ համար հեղինակութեան ամենակարևոր հարցը այն չե, ինչը նրանց համար ե: Նրանց հեղինակութեանը կայանում ե նրանում, վորպեսզի ավելի թույլ պետութեանն ավերեն, փող վերցնեն, հող գրավեն նրանից: Այդ դեպքում հեղինակութեանը պահպանված կլինե՞ր յեթե նույնիսկ վերավորեյին նրանց դեպպանին կամ խախտեյին դե-

պանատան անձեռնմխելիութիւնը: Մեզ համար բարձրագույն հեղինակութեան հարցը կայանում նրանում, թե ինչպես խուսափել բանվորների և գյուղացիների արյունհեղութիւնից, վորպեսզի վոչ մի տեղ և յերկրագնդի վոչ մի անկյունում խորհուրդները հետամնաց ժողովուրդների նկատմամբ ճնշողների և շահագործողների դերում հանդես չգան:

Վերջին ժամանակները դիվանագիտական հորիզոնում ամպեր են կուտակվում: Ահա թե ինչու ենք բանվորներին և գյուղացիներին տեղյակ դարձնում պատերազմի այն նոր վտանգների մասին, վոր սպառնում են մեր խորհրդային Միութեանը:

Միթե միայն մեզ է սպառնում պատերազմի վտանգը Վոչ: Նորից և նորից հանդես է գալիս շուկաների հարցը: Նորից ևրոպական և ամերիկյան ինդուստրիային նեղում են ներկայումս գոյութիւն ունեցող սահմանները: Նորից գաղութների հարցն է դրվում, այս կամ այն ուղղութեամբ կապիտալիստական յերկրների լայնացման պահանջը նորից հասունացել է: Մենք տեսնում ենք, թե ինչպես Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների և Յապոնիայի միջև յեղած հակասութիւնները նորից խորանում են: Անգլիայի և Ֆրանսիայի հակասութիւնները չեն վերացված և մազից են կախված: Նեղ է թվում այս աշխարհը կապիտալիստներին, հենց այդ պատճառով ել, հետամնաց ժողովուրդներին շահագործելու, աշխարհը բաժանելու և շուկաներ ձեռք բերելու համար պատերազմի անհրաժեշտութիւնը նորից յերևան է գալիս:

Վո՞րքան շուտ կարող է լինել նման պատերազմը: Բանվոր դասակարգին մենք միշտ ել ասել ենք,



ԸՅԿ. Կուլբեցկի

վոր չենք կարող նախորոք վորոշել ժամանակը, վորովհետև միշտ կարելի յե սխալվել: Ամիսները և տարիները պատմութեան տեսակետից շատ փոքր ժամա-

նակամիջոց են: Մեր միջազգային քաղաքականությունն ընդհանուր առմամբ այնպիսի ուղիով է ընթանում, վոր բանվորը յերբեք չպետք է մոռանա, վոր հրացանով ձեռք բերված և պահած իշխանությունը նույնպես հրացանով պետք է պաշտպանել:

Մեր ներքին դրությունը յերբեք այնպես ուժեղ չի յեղել, ինչպես այժմ է: Մենք հուժկու և ամուր պետություն ենք դարձել. որեցոր մենք աճում և ամրանում ենք, վորի հետ միասին ավելանում են մեր և կապիտալիստների միջև յեղած հակասությունները. յուրաքանչյուր որ մեզ նոր հաջողություններ է բերում, իսկ մեր ուժեղացումը—կապիտալիստների կործանումն է:

Մեզ համար կարևոր է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի կարողանանք խուսափել պատերազմից, իսկ նրանց ավելի ձեռնտու յե՛լ ըստ կարելույն շուտ մղել մեզ դեպի պատերազմ:

Ինչո՞ւ նրանք պատերազմ չեն հայտարարում մեզ: Նրանք այդ բանը կանեյին, յեթե հավաստի լինեյին, վոր բանվոր դասակարգը կլուի և թույլ կտա մեզ ջարդելու. բայց ամբողջ աշխարհի բանվորները չեն ցանկանա և թույլ չեն տա մեզ ճնշելու: Դուք դուցե կարդացել եք այն մասին, թե ինչպես Անգլիայի, Ճրանսիայի, Գերմանիայի և ուրիշ յերկրների բանվորներն ամենուրեք հայտարարում են, վոր թույլ չեն տա պատերազմ սկսելու Սորհուրդների հանրապետության դեմ, նրանք իրենց մոտ են զգում մեզ, նրանք զգում են, վոր Ս.Ս.Հ. Միություն մեջ վոչ միայն ուս բանվորների, այլև միջազգային պրոլետարիատի գործն է կատարվում: Նրանք հավատացած են, վոր յեթե

մենք ուժեղանում ենք, մեզ հետ միասին ուժեղանում է նաև Արևմուտքի բանվոր դասակարգը, ավելի ու ավելի յեն համախմբվում և աճում ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի՝ կապիտալի գերեզմանավորների ուժերը:

Իշխանությունը վերցնելուց հետո, Արևմտյան Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատներն իրենց բանվորներին ատում եյին. «Ահա, տեսեք թե ինչպես շտապեցին Ս. Ս. Հ. Մ. բանվորները, վորոնք իրենց դրությունը լավացնելու համար, պարլամենտական, ռեֆորմի և սովորական կովի միջոցներով պայքարելու փոխարեն, շտապեցին դենքով լուծելու այդ բոլոր հարցերը, վորի հետևանքով այժմ նրանց մոտ պատերազմ, համաճարակ և ավերածություն է»: Ս. Ս. Հ. Մ. բանվորների նյութական վիճակը մի շարք տարիների ընթացքում ապահովված է մեր անտեսական դրության անընդհատ լավացումով (գուցե ավելի դանդաղ, քան դա մենք ենք ցանկանում), վորին նպաստում է արտադրական ուժերի աճումը և այն հանգամանքը, վոր հաջորդ տարին մենք նոր գործարաններ կունենանք, յերկու տարի հետո նրանց թիվը կավելանա, յերեք տարի հետո—նույնպես: Վորքան մենք ավելի հարուստանանք, այնքան ավելի կբարելավենք մեր դրությունը: Ինձ, ինչպես և ձեզանից յուրաքանչյուրին, իհարկե, ցանկալի յե, վոր մեզ մոտ աշխատավարձն աճի վոչ թե 12 տոկոս, այլ 25—50 տոկոս: Մեր, արհեստակցական միությունների գործը կհեշտանար, վորովհետև դուք ավելի քիչ կտրտնջայիք, և մենք ել ավելի հեշտություն մը կկարգավորեյինք աշխատավարձը:

Բայց մենք հաստատ կարող ենք ասել, վոր մոտիկ տարիներում, յեթե վոչ 25—50 տոկոս, ապա 10—12 տոկոսով մեր աշխատավարձը տարեց-տարի կբարձրանա: Միայն մենք կարող ենք թույլ տալ նման շքեղություն, ինչպիսին ե բանվորական որվա կրճատմանն անցնելը: Յեվրոպայում հակառակն ե կատարվում, այնտեղ, ընդհակառակը, բանվորական որն ավելանում ե, իսկ աշխատավարձը մնում ե նույնը: Աշխատանքի ինտենսիֆիկացիան ավելանում ե, իսկ աշխատավարձը մնում ե առանց փոփոխության:

Մենք պետություն ենք ղեկավարում ե այն ել լավ ենք ղեկավարում: Բանվորության մեջ դեռ աշխարհում չտեսնված չափով կուլտուրական աշխատանք ե տարվում. հարյուր հազարավոր բանվորներ ե բանվորուհիներ մասնակցում են հասարակական աշխատանքի. տասնյակ հազարավոր բանվորներ առաջ են քաշված դեպի պետական ապարատը ե մեր յերկիրը, կոոպերացիան, արհմիությունները ե կուսակցությունն են ղեկավարում, մի բան, վոր դեռ վոչ մի տեղ չկա աշխարհում: Մեր բարձրագույն դպրոցներում տասնյակ հազարավոր բանվորներից զանազան ասպարեզների համար մասնագետներ են պատրաստվում: Հարյուրավոր տարիներ գոյություն ունեցող հին կազմակերպություններին պատկանող Արևմտյան Յեվրոպայի բանվորները, տեսնելով այն ամենը, ինչ վոր մեզ մոտ ե կատարվում, այս բոլորի մասին կարող են միայն յերազել: Արևմտյան Յեվրոպայի բանվորների աչքին Պորհրդային բանվոր դասակարգի հեղինակությունն որեցոր աճում ե: Նրանք ականատես են, թե ինչպես

մի պետության մեջ, առանց կալվածատերերի ե կապիտալիստների, իրենք բանվորներն են ղեկավարում արդյունաբերությունը, թե ինչպես զարգացնում ե լայնացնում են՝ ցույց տալով բոլոր բանվորներին, վոր կարելի յե ապրել ե առանց կապիտալիստների:

Ցանկալի յե մի յերկու հարցի վրա ես կանգ առնել: Այսոր, տասնամյակի նախորդակին, հանկարծ ձայներ ենք լսում թե՛ «Ճիշտ ե, կառուցելը՝ կառուցում ենք, բայց ի՞նչ — սոցիալիզմ թե՛ կապիտալիզմ: Իսկ յեթե սոցիալիզմ, կարո՞ղ ենք այդ կառուցումն ավարտել, մինչև վերջն հասցնել: Առանց Արևմտյան բանվորների օջակցության միթե հնարավոր ե հաղթել մի յերկրում ե իրականացնել սոցիալիզմի կառուցումը»:

Վոչ թե դատարկ խոսքերով, այլ գործնականում որեցոր սոցիալիզմ կառուցող յուրաքանչյուր բանվորի համար նման հարցերն ավելորդ են թվում. հենց այդ պատճառով բանվոր դասակարգի մեջ նման տատանումները վոչ մի համակրանք չեն գտնում: Շատ տարորինակ ե, յերբ հարց են տալիս այն մարդկանց, վորոնք տասը տարի յե կառուցում են իրենց պրոլետարական արդյունաբերությունը, վորոնք իրենց ձեռքում են պահում սոցիալիստական արդյունաբերությունը, ուժեղացնում ե զարգացնում են յերկիրը, շատ տարորինակ ե, յերբ հարցնում են թե արդյոք մենք ի՞նչ ենք կառուցում, ե սոցիալիզմի կառուցումը կավարտե՞նք թե վոչ: Վլադիմիր Իլյիչը սովորեցնում եր, վոր յերբ տապալվի կապիտալիզմը ե ամբողջ աշխարհում հաղթանակե բանվորական հեղափոխությունը,

այդ դեպքում միայն հնարավոր է ապահովել կառուց-
վող սոցիալիզմի վերջնական հաղթանակը. իսկ քանի
վոր, մի կողմից՝ գոյութուն ունի կառուցվող սոցիա-



Ռեկ. Շմիդտ

լիզմի աշխարհը և մյուս կողմից՝ կապիտալիստական
աշխարհը,—կառուցվող սոցիալիզմը միշտ էլ յենթակա
յ է վտանգի:

Անկախ այդ վտանգից՝ կարո՞ղ ենք արդյոք մեր
յերկրի սեփական միջոցներով կառուցել սոցիալիզմ,
թե՞ աղքատության և կամ մի շարք այլ պատճառներով

մենք ստիպված կլինենք ապել՝ «ձիշտ է, կառուցում
ենք, բայց թե այդ կառուցումն արդյո՞ք կավար-
տենք,—դա հայանի չե»: Սոցիալիզմ կառուցող Սոր-
հրդային բանվորների համար վոչ մի արժեք չունեն
նման հարցերը. բայց նրանք նշանակութուն ունեն
իրև ուղղութուն, իբրև բանվոր դասակարգի ղեկա-
վարող լողունը: Սոցիալիզմի շինարարութունը հաջո-
ղությամբ առաջ տանել չի կարելի, քանի վոր հավա-
տացած չես թե կառուցում ես և այդ կառուցումը
կավարտես թե՞ վոչ: Յեթե դուք, սոցիալիզմ կառուցե-
լով հանդերձ, շարունակ յետ նայեք և մտածեք, թե
«կառուցելը՝ կառուցում ենք, բայց այդ կառուցումը
կավարտենք արդյոք»—այդ դեպքում վոչ մի գործ
առաջ չի գնա:

Պուտիլովյան գործարանի տրակտորային արհեստա-
նոցի կուսակցական ժողովում դեռ յերկու տարի սրա-
նից առաջ յես պնդում էյի, վոր սոցիալիզմի շինարա-
րության հարցին նման ձևով մոտենալ վոչ մի դեպ-
քում չի կարելի, վորովհետև դա նշանակում է, վոր
մենք թեպետ կառուցում ենք տրակտոր, բայց հայտնի
չե թե վերջը ի՞նչ դուրս կգա—չբասույզ նավակ թե՞
կանացի գոնտիկ (ծիծաղ): Այդպես սոցիալիզմ կա-
ռուցել չի կարելի: Նման ձևով սոցիալիզմ յերբեք չես
կառուցի: Մարդ պետք հավատացած լինի, վոր այն,
ինչ նա կառուցում է, վերջիվերջո կկառուցվի:

Մենք հավատացած ենք, վոր Արևմտյան Յեվրոպայի
բանվորները քանի գնում ուժեղանում են և կապի-
տալի դեմ վերջնական պայքարի յեն պատրաստվում:
Մենք չենք կասկածում, վոր մեր սոցիալիզմի շինա-

բարութիւնը որեցոր ամբաստում եւ Արեւմտյան Յեկրո-
պայի բանվորները եւ գլուխացիութեան հետ ունեցած
մեր կապը, վորը իր հերթին ապահովում եւ սոցիա-
լիզմի շինարարութիւնը: Տարեց-տարի մենք ավելի
ուժեղանում ենք եւ ամբանում, վորից հետեւում եւ, վոր
հաջորդ տարին մենք ավելի եւ կուժեղանանք:

Ո՞վ կհավատա, վոր կուլակն ավելի ուժեղ եւ, քան
թե մենք: Ո՞վ եւ ավելի ուժեղ. մե՞նք, թե՞ կուլակը
կամ նեպոմանը: Նեպոմանն ապրում եւ, վորովհետեւ մենք
ենք թույլ ավել նրան ապրելու. նա կղաղարի ապրել,
յերբ դա մենք կցանկանանք:

Հոկտեմբերյան հեղափոխութեան տասնամյակին, ով
ցանկանում եւ վախեցնել պրոլետարիատին նրանով,
վոր կուլակը կարող եւ մեզ խեղդել, նա, ուրեմն, իսպառ
մոռացել եւ մեր դժվարին պայքարի տասնամյակը եւ
չի մասնակցել իշխանութիւնը բռնադրավելու մեր
պայքարին: Տասը տարի հետո, յերբ արտադրութեան
ուսցիոնալիզացիայի հարցն եւ դրված, մենք պետք եւ
ավելի խելացի եւ լավ աշխատենք, վորովհետեւ, չնայած
վոր մենք անցյալի հետ համեմատած ավելի հարստացել եւ
ուժեղացել ենք, բայց աշխատանքն ավելի բարդացել եւ
դժվարացել եւ (վոր դժվարութիւնները շատ են—դրա-
նում վոչ մի կասկած չկա):

Այնտեղ, ուր կապիտալի դեմ պայքար եւ մղվում,
այնտեղ մի՞թե մեր կառավարութիւնը, արհմիութիւնը-
ները եւ կուսակցութիւնը առաջինը չեն դուրս գալիս:
Մի՞թե մի փոքր կասկած անգամ կարող եւ լինել, վոր
մենք, կուսակցութեան գլխավորութեամբ, ապահովված
ենք յեղել ամեն տեսակի տատանումներից, սխալներէջ

կամ շեղումներից: Յեթե ուսում բանվորներն այս տասը
տարվա ընթացքում անհաշիվ հաղթութիւններ են
տարել, ապա դա յեղել եւ նրա շնորհիվ, վոր նրանց
ղեկավարել եւ մի կուսակցութիւն, վորը շտեմոված
ղիսցիալինա եւ միասնականութիւն ունի եւ վորի գլուխ
կանգնած եւ յեղել աշխարհի ամենախոշոր մարդը՝ Լե-
նինը: Հայտնի յեւ, վոր անմիջականորեն ինքը Լենինն
եր ղեկավարում Լենինգրադի պրոլետարիատի կոմի-
ները: Լենինը ամենախոշոր ուշադրութիւն եր դարձ-
նում Լենինգրադի բանվորների պայքարին: Ստոք-
հոլմի առաջին համագումարին, մեր կուսակցութեան
պառակաման առաջին փաստից հետո Լենինը այդ առ-
թիվ ո՞ւմ դիմեց. — Լենինգրադի բանվորներին («Լե-
նինգրադի բանվորներին՝ Ստոքհոլմի համագումարի
մասին»): Ամենադժվար բոլկներին նա դիմում եր
Լենինգրադի բանվորներին: Քաղցի, կարիքի եւ ավե-
րածութիւնների ազդեցութեան տակ բանվոր դաս-
կարգը յերբեմն տատանվել եւ, բայց յեղել եւ մի ուժ,
վորը յերբեք չի տատանվել, դա Լենինի ղեկավարու-
թեամբ կառուցված կոմունիստական կուսակցութիւնն
եւ Մեր թշնամիները հայտարարում եյին. «Ի՞նչախի
կուսակցութիւն եւ դա. դրանք վոչ թե պողպատյա,
այլ նույնիսկ դիվային դիսցիպլինա ունեն»): Յեվ հենց
այդ դիսցիպլինայի շնորհիվ եր, վոր այս տասը տարվա
ընթացքում մենք անբիժ ենք պահել սոցիալիզմի դրո-
շակը, ամենուրեք մենք հանդես ենք յեկել շահագործ-
վողների եւ ճշմարիտների պաշտպանի դերում:

10-րդ տարեգլխին մի՞թե կարելի յե տատանվել:
Մենք տեսնում ենք դժվարութիւններ, բայց դրանցից

չենք վախում, վորովհետև առաջվա պես մեզ զեկավարում ե Լենինի հիմնած և պրոլետարիատից կազմված Լենինյան կուսակցութիւնը: Յե՛վ յեթե գտնվում են այնպիսի լականներ, վորոնք 10-րդ տարեգլխին մտածում են այսպես—«Ի՞նչ ենք մենք կառուցում, արդո՞ք մենք սոցիալիզմ ենք կառուցում, արդո՞ք մեզ չի կլանի կուլակը»,—ապա այդպիսիներին պետք ե ասել.—«Հեռու կացեք, մեզ մի խանգարեք սոցիալիզմ կառուցելու, վորովհետև մենք համոզված ենք, վոր մենք սոցիալիզմ կառուցել, կառուցում ենք և այդ կառուցման գործը իր ավարտին կհասցնենք»: (Ծափահարութիւն):

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ —
Մոսկվա, Նիկոլսկի Վոդ. № 10

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

	Գ ի ն ը
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄԵՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄԵՆԵՐԸ ԺՈՂ.ԼՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն. Կրուպսկայա	20 կ.
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ.—ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, —Ն. Բուխարին	1բ. 25 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ.—Ի. Ստալին	50 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ.—Ի. Ստալին (272 էջ)	1 բ. 50 կ.
ՀԱՄ. ԿՈՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍԱԿ. (բ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Վ. Վոլոսկիչի	1բ. 50 կ.
ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՍԸ ՏԱՐԻ	70 կ.
1905 թ. ՄԵՐ Լ ԲԱՆ.—ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, Ի. Ֆլեբովսկի	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ.—Գ. Ռելիև	20 կ.
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ին.—Ա. Կարլինյան	70 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ,—Զ. Լավրենտյե	30 կ.
ԽՍՀՄ ՅԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ,—Ա. Աբաբուռնի	30 կ.
ՇԻ. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) կազմեց իվ. Տոլստոլսա	7 կ.
ԿԼԱՐԱ. ՅԵՏԿԻՆ (կենսագր.)—կազմեց Զ. Բոյարսկայա	15 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. հմբ.) ըստ Վերգասնիկու, պրակ I,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " պրակ II,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " պրակ III	50 կ.
ՀՈԿՏԵՄԲԵՐ	10 կ.
ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆՔ ՈՒԶՈՒՄ, ԲԱՅՑ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ	10 կ.
ԻՆՉՈՎ Ե ՈՒԺԵՂ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԸ	15 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ,—Գ. Ազոլ	35 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱԶԱՑ. և ԶԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ,—Գրեմյացկի	50 կ.

Ինքզեքս Ե ՄԱՐԳՎԱՍ ՏԻՅԵՋԵՐՔԸ, — ապառախարհութիւն Գ. Գրապի	50 կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՅՅՈՒՆ Ե ԵՂԵՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, — Մ. Գրեմյացիկէյ	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ Ե ԹՈՒՆԵՐԸ, — Բ. Սեմեյկին	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵՂԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Յաղկեցիկէյ	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵՂԻ ՅԵ ԳՅՈՒՂ. ԵՂԵՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՅՅԱՅՆԵՂ	20 կ.
ՏԴԻՏՈՒԹՅՈՒՆԸ Ե ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Դմիտրիևա	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳՆԻ ԳԵՐԱՆ ԿԿՈՏԻ (Կոստանթնուպոլիսի դուռը), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, — Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՅԻՎԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, — Պ. Վլասով,	40 կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, — Մ. Լիվիսկի	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈՂՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ, Ա. Սկոմորոկով	17 կ.
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵՂ ԿԱՔԱՆՈՒՄՏ ԿՈՎ, — Բ. Սկոմորոկով	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՅ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ.	15 կ.
ԽՈՉԸ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, — Ե. Լիվսկի	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ, — Գ. Սպեբախիկէյ	16 կ.
ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ, — Բ. Գինսբուրգ	30 կ.
ԳՅՈՒՂԱՅ. ՊԱՀԱՆՋԵՐԸ Ե ԽՈՐՀՐԴ. ԳՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ	12 կ.
ԳԵՂՋԿՈՒՀԻՆ Ե ՅԵՐԵՆԱՆԵՐԸ	25 կ.
ՄԵԹՈՂԱԿԱՆ ՋԵՌԱՐԿ (ուսուցիչներէ համար)	70 կ.
ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1 ԱՍՏԻՃ. ԳՊՐՈՑՈՒՄ, Բ. Ժապորոնկով	65 կ.
ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ Ե ԳՊՐՈՑԸ	40 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ (ժողովածու)	60 կ.
ՊԻՈՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԻ, — ՅԵ. Ռադիս	10 կ.
ՊԻՈՆԵՐ, ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ Ե ՈՒԺԵՂ, — Ն. Ֆայլիներ. մաս 1,	40 կ.
ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ Ե ՈՒԺԵՂ » մաս II,	45 կ.
ՔՈՍ, ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵՂ ՆՐԱ ԴԵՄ, — ԲԺ. Նաղեյին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, — Վ. Բրոններ	25 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԱՅՐԵՐԸ — ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ — Կրավչենկո	35 կ.
ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԸ, — Պ. Խլեբնիկով	45 կ.
ՅԵՐԿԻՐ ԽՈՐԲԵՐՈՒՄ, — Ա. Կուպրին (նկարազարդ)	18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՋԿԱՆ, — Պ. Ուրլովսկի (նկարազարդ)	28 կ.

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՂԱՆՈՎ, — Պ. Ուրլովսկի (նկարազարդ)	22 կ.
ՄՈՒՍԿԻ Ե ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ) — Գ. Մամին-Սիբելյակ (նկար.)	15 կ.
ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿԻԿՆԵՐԸ (նկարազարդ)	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵՅ ԺԱՄՈՎ, — Ֆր. Ֆոկս (նկարազարդ)	18 կ.
ԱՆՋՆՎԵՐ ՏՂԱՆ, — Երմոնով ԴՄ. Դիլիս (նկարազարդ)	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, — Ուլյաս (նկարազարդ)	12 կ.
ԹՈՉՈՒՆՆԵՐ (դուստախայ ալլամ յերեխաներէ համար)	25 կ.
Հ. ՊԱՐՈՆՅԱՆ (ընտելը յերկեր), պրակ I	40 կ.
" " " պրակ II	35 կ.
" " " պրակ III	35 կ.
" " " պրակ IV	15 կ.
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ: ՄԱՐԴԸ, — Մաքսիմ Գորկիյ	45 կ.
ՊԱՏՎԱՅԻՆԵՐ, — Ա. Սեբաֆիմովիչ	10 կ.
ՄՐԿԱՀԱՎԸ Ե ՈՒՐԻՇ ՊԱՏՎԱՅԻՆԵՐ, — Մաքսիմ Գորկիյ	10 կ.
ՅԵՐԿԻՐԱՇՈՐԺ (պատմվածք)	25 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ, — Մաքսիմ Գորկիյ	40 կ.
ԿԱՆԴԱՂՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, — Ն. Լյաշկո	20 կ.
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏՎԱՅԻՆ, — Ս. Յակովլև	20 կ.
ԸՆԿ. ՎԱՂԻՍ, — Մ. Յուրին	15 կ.
ՉԱՊԱՅԵՎ, — Գ. Ֆուրմանով	50 կ.
ՉԱՂԱՅՊԱՆ ՈՏՈՊԱՅ, — Ա. Ֆրոլով	20 կ.
ԳԱՅԼԵՐ, — Ֆ. Գլադկով	25 կ.
ՄԱՅՐԸ, — Ֆ. Բերեզովսկիյ	45 կ.
ՄԵՍ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ՝ նկարչ. և ընդհանր. մեջ (ալլամ)	50 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0403480

20 407



М. Томский
**Что дала Октябрьская
революция рабочим**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР
Москва, центр, Никольская, 10